

անգամ: Երկու հրատարակություններն իրարից տարբերվում են էջերը շրջափակող զարդերով: Այստեղ բերված օրինակն ունի զարդափակ էջեր, իսկ մյուսը՝ աստղափակ է: Այս օրինակի հիշատակարանում ավարտման տարևթիվը կողքին նշված է «օգոստոսի Ժ» ամսաթիվը, իսկ աստղափակ երեսներով «Ժամագրքի» ամսաթիվը, ըստ Ղազիկյանի նկարագրության «Նոյեմբերի 1» է:

«Ճաշոց գիրք գեղեցկատիպ եւ վայելուշ... Ի տպարանում ծառայի ձերոյ Սարգսի նաստի ընդ Հովանեաւ ս. Եկեղեցոյն Աստուածածնի, ի քվին փրկչին ՌէժժԲ, իսկ ըստ Հայոց ՌՃԿՍ յուլիսի, ի Կոստանդնուպոլիս»:

«Սկիզբն գրոցս որ կոչի ժողովածու... Եւ բուսբերութեան Հայոց ՌՃԿԲ յունվարի ամսոյն Ի: Եւ ի քվին փրկչին 1713, յունվարի Ի: Ըստամպոյ քաղաքի»:

«Մարկանց հոգեւոր, այսինքն կարեւառտ մեկնութիւն Բրիտոնէականի վարդապետութեան... Ի բուսկանութեան տետն մերոյ Յիսուսի ՌէժժԲ-ին»:

«Գիրք դպրութեան եւ տաղարան վայելուշ եւ գեղեցիկ ի զանազանից բանաստեղծից... Եւ ի յամի փրկչին 1714, ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս»:

«Համառտ իմն մեկնութեան սերոյ Աւետարանի... Շարադրեցեալ ի պատրի Պետրոսէ Ռիֆաւա ի կարգէ Յիսուսի Քրիստոսի... Յամի տետն 1714 մարտի ամսոյ ԺԲ: Մեծաւորի հրամանաւ»:

«Օրհներգութիւնն ոգեւոր և մաղբանք ազօրականք... Շարադրեցեալ ի տէր Գրիգորէ առաքելական վարդապետէ Եղոկեցոյ, միսիօնարէ առաքելական: Քրիստոսի փրկչին մերոյ Եւրմարմնութեան բուին ՌՉԺԿ, օգոստոսի ԺՉ: Տպագրեալ ի Կոստանդնուպոլիս: Մեծաւորի հրամանաւ»:

«Տօնացոյց... Ի քվին փրկչին 1715, ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս»:

«Ճշմարիտ իմաստութիւն... Շարադրեցա իտալերէն յունեմնէ վարդապետէ և բարգմանեցա ի հայ բարբառն յայլմէ ումեմնէ Աստուծոյ ծառայի ի հայ կարգէն: ...Ի քվին Քրիստոսի ՌՉԺԸ, եւ Հայոց ՌՃԿԷ, յունվարի ԻԵ: Ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս: Հրամանաւ մեծաւորաց»:

«Գիրք տօմարաց Հայոց, Հոսմայեցոց եւ պարգատմար. ընդ որոց եւ տաղ Յովասափու... Եվ ի բուսբերութեան Հայոց ՌՃԿԷ, մայիս ամսոյն Ի: Եւ ի քվին Քրիստոսի փրկչին ՌՉԺԸ, մայիս ամսոյն Ժ: Ի մայրաքաղաքն Ըստամպոլ»:

Այստեղ թվարկված գրքերով չի սպառվում Կ. Պոլսի հայ կաթողիկոսների գաղտնի տպարանի հրատարակությունների ցուցակը: ԿՏանդիպան դարձյալ ուրիշ հրատարակություններ, որոնք չեն նշվել առեն հոգվածում՝ մատենագիտական աղբյուրներում և Երևանի գրադարաններում չլինելու պատճառով: Սակայն, այստեղ բերված օրինակների հետ համեմատելով, հեշտությամբ կարելի է որոշել դրանց հրատարակության վայրն ու տպարանը:

1718 թ. հետո Կ. Պոլսի Բեգօղլի թաղամասում տպագրված գրքերի շնորհիվ հանդիպում: Հովհաննես Կոլոտ պատրիարքի եռանդուն գործունեության շնորհիվ կաթողիկոսներից շատերը բանտարկվում են ու հեռացվում ասպարեղից: Նրանց նշանավոր պարագլուխներից մեկը, տպագրության գործում մեծ դեր խաղացած Սահեթճի Սարգիս Գասպարյանը, Գ. Գալմեջարյանի ասելով, գեղում 1714 թ. բանտարկվել էր թուրք իշխանությունների կողմից և մահմեդականություն ընդունելով ազատվել մահապատից²⁰: Մյուսները թարնվել կամ փախել էին Կ. Պոլսից: Կառավարությունն էլ արգելել էր կաթողիկոսների գործունեությունը: Տպարանը բռնազրավվել և անցել էր ուրիշների: Դեռևս պարզված չէ, թե ում են անցել կաթողիկոսների Բեգօղլի թաղամասի տպարանի տառերն ու տպագրական այլ պարագաները, միայն նրանց գործածած փորագիր պատկերները, այնուհետև հանդիպում են այդ ժամանակների նշանավոր տպագրիչ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու և նրա ժառանգների հրատարակած գրքերում:

Վերոգրյալ փաստերը հաստատում են, որ 1690—1700 թթ. Լիվոռնոյում և Մարսելյում հայկական տպարաններ չեն եղել: Հիշյալ ժամանակներում այդ քաղաքների անուններով լույս տեսած գրքերը տպագրվել են Կ. Պոլսում:

Բացառվում է նաև 1692—1718 թթ. Ամստերդամում, վանանդեցիների տպարանից բացի, կեկեղեցուն կից հայկական մի Երկրորդ տպարանի գոյությունը: Այս քաղաքի տպագրություն ցույց տրված 1692, 1712 և 1718 թթ. «Շարակնոցները» նույնպես տպագրվել են Կ. Պոլսում:

Թեոդիկի, Լեոլի, Լեոնյանի մոտ և բանասիրական այլ աղբյուրներում հիշատակվող Կ. Պոլսի «Ս. էջմիածնի և ս. Սարգսի զօրավարի», «Յանուն սուրբ էջմիածնի» անուններով կամ

20 Գ. Գ ա լ է մ թ ե ա ր և ա ն, Կենսագրություններ Երկու հայ պատրիարքներու, էջ 93 և 95: